ՀՀ Արագածոտնի մարզի «Դաշտադեմի Գ.Բաղդասարյանի անվան միջնական դպրոց» ՊՈԱԿ–ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ՝ մաթեմատիկա /15դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը տպագրվում է ստորև:

ՈՒսուցչի թափուր աշխատատեղի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափսի,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ /, /միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ /,

3. անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» օրենքի 26–րդ հոդվածի 1–ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5. ինքնակենսագրություն / Ձև 5/,

6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / առկայության դեպքում /,

9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

10. հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն / մասնակցած լինելու դեպքում /,

11. «Հանրակրթության մասին» օրենքի 26–Դդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետի / առկայության դեպքում նաև 2–րդ կետի / պահանջվող համապատասխան փաստաթուղթ,

12. «Հանրակրթության մասին» օրենքի 26–րդ հոդվածի 2–րդ մասի 3–րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից,

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 4–ից նինչև սեպտեմբերի 17–ը ներառյա,լ ամեն օր՝ ժամը 10^{00}–ից մինչև 15^{00}–ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 19–ին ժամը 14^{00}–ին, Դաշտադեմի Գ.Բաղդասարյանի անվան մ/դ–ում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին Համայնք, Դաշտադեմ բնակավայր, փ.1, նրբ.4, շենք 2:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 094127083: